Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝** Տնօրեն Կամո Նաղդալյան

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի, ս/թ մայիսի 6-ից 8-ը

3. **Հրավիրող կողմը՝** Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Նախատեսված գործուղման նպատակն էր հանդես գալ հյուրախաղով և ներկայացում խաղալ Վիրահայոց թեմի երեխաների, Վիրահայոց թեմի Սուրբ Մովսես Խորենացի նախակրթարանի, Թբիլիսիի թիվ 103,104 հանրային դպրոցների և Դամիա գյուղի փոքրիկների համար՝ մեր ներկայացումներն էլ ճանաչելի դարձնել նրանց համար:

5. **Քննարկված թեմաները**

Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի հետ զրույցի ընթացքում կարևորել ենք Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, և Սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին՝ Մայր հայրենիքի մշակութային կյանքին մասնակից դարձնելը:

Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոնի կողմից առաջարկվել է այս հյուրախաղերը դարձնել ամենամյա:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Այցի շրջանակում հանդիպում ենք ունեցել Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Արմեն Բայանդուրյանի հետ: Հանդիպել ենք նաև Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանին և արժանացել «Առաջնորդական գիր» օրհնության: Զրույցի ընթացքում կարևորվել է Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, և Սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին՝ Մայր հայրենիքի մշակութային կյանքին մասնակից դարձնելը:

Եղել ենք Թբիլիսիի հայկական եկեղեցիներում, մշակութային կենտրոններում, հայկական պանթեոնում, ծանոթացել քաղաքի հայկական մշակութային կյանքին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Արմեն Բայանդուրյանի հետ պայմանավորվել ենք իրականացնել փոխադարձ հյուրախաղեր: Թբիլիսիի հայկական թատրոնը պատրաստակամություն է հայտնել մասնակցելու Արտաշատի հանրապետական թատերական փառատոնին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոնի կողմից առաջարկվել է այս հյուրախաղերը դարձնել ամենամյա:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 12.05.2026թ.